

ներուն հարաւ-արեւմտեան Մաֆֆաշէր կը-Հանչաւ: Այս ծանծաղու-տը իրապէս կրնայ ըլլայ Բեթաբրան՝ ուր Յովհաննէս կը մկըր-տէր, և հետեւաբար ներելի է մտածել թէ հոն էր որ մեր Տէրն ալ մկրտուեցաւ իր Կարապետին ձեռքովը: Այժմ լատին ուխտա-ւորները Մաքքատէթ էլ-Կորանիէ ծանծաղուտը չեն երթար լուա-ցուիլ՝ սա պատճառաւ որ տնոնք ընդհանրապէս Մեռեալ Ծովուն եզերքը պտոյտ մը ընելու նպատակը կ'ունենան, և որպէս զի ա-նոնց ճանապարհը չերկարի՝ առաջնորդները զանոնք կը տանին առաւելապէս Յորդանանի այնպիսի մէկ տեղը՝ որ Մեռեալ Ծո-վէն նուազ հեռի ըլլայ»:

2.— Կ'արժէ գիտնալ թէ ո՞ւր շինուած էր մեր Տիրոջ մկըր-տուած եկեղեցին: Տիրող աւանդութեան մը համաձայն, նոյն և՛ կեղեցին շինուած էր Յորդանանի անդիի կողմը, Բեթաբրայի մօտ. այս մասին Արգուլֆ եպիսկոպոս՝ որ 670ին այցելած է Յոր-դանան՝ ունի շահեկան տեղեկութիւններ: Յիշեալին տեղեկա-գրական բոլոր յուշերը նաւարեկութեան մը պատճառաւ կոր-սուած էին. երբ Եւրոպա վերադարձաւ Սկովտացի Ադամնեան վանականի մը գրի առնել տուաւ իր բոլոր յուշերը Պասկոնիս Ս. Տեղեռու խորագրին տակ (Տե՛ս Orient Latin. Հտր. Ա.):

Արգուլֆի նկարագրած մկրտութեան եկեղեցին կը գտնուի Copratha-ի արեւմուտքը, 150 քայլ հեռի, գետին մէկ փոքր թե-ւին կամ ջրանցքին վրայ: Արգուլֆ հետեւեալ կերպով կը յիշա-տակէ նոյն եկեղեցին. «Դետին եզերքին վրայ կը գտնենք քա-ռակուսի փոքր եկեղեցի մը որ, կ'ըսեն թէ՝ շինուած է այն տե-ղը ուր կը պահուէին զգեստները մեր Փրկչին՝ որ մկրտուեցաւ: Այս եկեղեցին հաստատուած էր չորս սիւներու և քարէ կամար-ներու վրայ. բայց ջուրին վրայ ըլլալով բնակելի չէր, վասն զի ջուրերը ներքեի կողմէն պատած էին: Կղմինտով ծածկուած էր ան, և հիմը շինուած էր կամարակապ քարերով»: Ճամբորդները կ'ըսեն թէ այս մատուռին ստորին բոլոր մասերը մինչև այժմ կ'երևնան:

3.— Հայերը Յորդանանի եզերքը վանք կամ եկեղեցի ու-նէի՞ն. — պատասխանս հաստատական է, քանի որ, ինչպէս յայտ-նի է յիշատակարաններէն, Յոյները և Վրացիները հոս վանքեր և եկեղեցիներ հիմնած էին, որոնցմէ մի քանին գոյութիւն ու-նին մինչև ցայսօր: Հայերը որ Ս. Քաղաքին մէջ և շրջակաները